ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 հոկտեմբերի 2024 թվականի N 1581-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ «ՄԻՆՉԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԸ ԿԱՌՈՒՑՎՈՂ, ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՂ ԿԱՄ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ 500 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ԵՎ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ» ԾՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ԵՎ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ԵՎ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ՝ ԿԱՌՈՒՑՄԱՆ, ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԿԱՄ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի 1-ին, 2-րդ, 4-րդ պարբերությունները և 4-րդ պարբերության 1-ին, 2-րդ ենթակետերի պահանջները և ելնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 3.4-րդ կետի կատարումն ապահովելու անհրաժեշտությունից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 500 մանկապարտեզ և նախակրթարան» ծրագրում ընդգրկված մանկապարտեզների և նախակրթարանների ցանկը, ներառյալ՝ հաստատության տեսակի, հզորության, շինարարական աշխատանքների՝ սույն որոշման N 2 հավելվածով հաստատված չափորոշիչների հիման վրա ընտրված միջամտության աստիճանի, ինչպես նաև պատվիրատու մարմնի վերաբերյալ տեղեկատվությունը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշման N 1 հավելվածում ներառված մանկապարտեզների և նախակրթարանների գոյություն ունեցող շենքերի և օժանդակ շինությունների քանդման աշխատանքներից ձևավորվելիք արդյունքը համարվում է տվյալ աշխատանքներն իրականացնող կապալառու կազմակերպությունների սեփականություն: Ընդ որում, քանդման (ներառյալ՝ շենք–շինությունների հիմքերի) աշխատանքները և դրանց արդյունքում առաջացած աղբի տեղափոխումն ընտրված կապալառու կազմակերպության կողմից իրականացվում են անհատույց՝ սեփական միջոցների հաշվին:

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության համապատասխան համայնքների ղեկավարներին՝

1) N 1 հավելվածում ներառված մանկապարտեզների և նախակրթարանների գոյություն ունեցող շենք–շինությունների քանդման դեպքում շինարարական աշխատանքների մեկնարկից 1 ամիս առաջ լուծել տվյալ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հետ կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրերը.

2) N 1 հավելվածում ներառված մանկապարտեզների և նախակրթարանների շինությունների կառուցման և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման աշխատանքների ավարտից հետո 1 ամսվա ընթացքում կազմակերպությունների հետ կնքել ոչ բնակելի տարածքների անհատույց օգտագործման պայմանագրեր:

4. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին, Հայաստանի Հանրապետության մարզպետներին և Երևանի

քաղաքապետին (առաջարկությամբ)՝ ապահովել սույն որոշման N 1 հավելվածում ներառված մանկապարտեզների և նախակրթարանների հաշվեկշռում գտնվող գույքի (բացառությամբ շենքերի և շինությունների) պահպանման աշխատանքները՝ մինչև տվյալ մանկապարտեզների և նախակրթարանների փոխարեն նոր նախադպրոցական հաստատությունների կառուցման ավարտը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

04.10.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ